

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԳ. ՏԱՐԻ — 1929

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

Փրիթ-Շրեյն Գիւմբերգի Կոնգրեգացիոնի Ի վիեննա աշխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէրներու:

Բաժանորդագիրն է առեւ երկրորդ համար՝ 1 ստորագրագ, կամ յինկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA”

VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

(Առաքուած Խմբագրութեան)

- 77. Արծրունի, Արմէն — Նոր ուղիներ, հասարակագիտական — մանկավարժական: Հալէպ, տպ. Բ. Թօփալեան, 1926, 8⁰, էջ 184: Գին՝ 1 մէլլիւ:
- 78. Արմէն — Դաշնակցութեան օրը: Սոֆիա, տպ. Արաքս, 1929, 8⁰, էջ 32: Մանչըր. Արաքս, Թիւ 5: Գին՝ 10 լիվա:
- 79. Արշակունի Ա. — Տարած-Սասուն Մուրատ Պետրոսեան. էջեր Հայոց նորագոյն պատմութեան: Հալէպ, տպ. Բ. Թօփալեան, 1929, 8⁰, էջ 280: Գին՝ 12 Ֆր.:
- 80. Գասպարեան, Դոկտ. Ա. — Պատմահասարակագիտական խնդիրներ: Գաւիթ, տպ. Յուսարեք, 1929, 8⁰, էջ 126: Մանչըր. Յուսարեք, Թիւ 21: Գին՝ 5 Ե. դ.:
- 81. Գարեգին Եպիսկ. Տրապիզոնի — Միամեայ տեղեկագիր եւ անգրագարձումներ Գալիֆօրնիոյ նորակազմ առաջնորդութեան 1928—1929: Ֆրէզնո, 1929, 8⁰, էջ 31:
- 82. Գեղարքունի Գ. — Մաղկաստան, Գ. շարք: Պարիս, տպ. Թուրպեան, 1929, 32⁰, էջ 93: Գին՝ 10 Ֆր.:
- 83. Գէորգ Մեսրոպ, գրական եւ ուսուցչական գործունէութեան 30 եւ 25 ամեայ յորելեանի առիթով կենսագրական գծեր: Սոֆիա, տպ. Պ. Պալլադեան, 1929, 8⁰, էջ 48:
- 84. Գրացուցակ Գրիգոր Մարտիրոսեանի, Ֆիլիպէ: Ֆիլիպէ, 1929, 8⁰, էջ 8:

“HANDES AMSORYA”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLIII. JAHRGANG — 1929

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Preis dieses Jahrganges 1 Pfund Sterling.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թիւ 10, 11

ՀՈԿՏԵՄԲԵՐ — ՆՈՅԵՄԲԵՐ

ԽԳ. ՏԱՐԻ 1929

ԳԵՐ. Հ. ՅՈՏԱՆ Վ. ԱԻԳԵՐ

ԸՆԴՀԱՆՐԱՍՄԱՆ ԱՐԱՅ ՄԻՏԻՊԱՐԵԱՆ ՄԻՆԱՐԱՆՈՒԹԵԱՆ Ի Ս. ՂԱԳԱՐ

Յուրախակցութիւն Միաբանութեանս կը հաղորդէր հեռագիրը հրճուական աւետիսն, թէ Գեղ. Հ. Յոտան Վ. Աիգերի: Միաբանութիւնս Մխիթարայ գահին վրայ յանձին Գեղ. Հ. Յոտան Վ. Աիգերի: Միաբանութիւնս կը շնորհակցուի իր ուրախակցութիւնը ժամանակին հեռագրով նորընտիր կնչալէս փութաց յայտնել իր ուրախակցութիւնը ի Ս. Ղազար, նոյնպէս այժմ կու գայ Գեղ. Արքայօր եւ իր եղբայրակիցներուն ի Ս. Ղազար, նոյնպէս այժմ կու գայ հրապարակաւ արտայայտութիւն շնորհել իր ուրախ գաւթումներուն:

Գեղ. Հ. Յ. Աիգեր ծնած է յԱնկիւրիա, 3 հոկտ. 1877: Մանուկ հասակին դիմած է ի Ս. Ղազար՝ զինուորելու Երանաշնորհ Մխիթարայ դրօշին տակ, ուր կը ծառայէր նշանաւոր հանդիսացան Միաբանութեան եւ Ազգին համար Հ. Մկրտիչ եւ Հ. Յարութիւն Աիգերեաններ: Փարսի իր սուրբ կողման՝ կ'անդամակցի Միաբանութեան եւ 1899 ին քահանայական ձեռնադրութեամբ կը թեւակոխէ գործնական ասպարէզ, հոն ի սպաս դնելու իր շտեմարանած առաքինութիւններն Եկեղեցոյ, Միաբանութեան եւ Ազգին:

Իր ընդունակութիւնները շուտով կը գրաւեն Միաբանութեան ուշադրութիւնը եւ Հ. Յոտան օր աւուր կը ծանրաբեռնուի կարեւոր պաշտօններով. կը կարգուի ուսուցիչ Մխիթարեան Կոնքրեցի, սպա Մուրատ Ռափայէլեան վարժարանի. կը գործէ իբրեւ ընդհ. Զարտուղար Միաբանութեան եւ որպէս յանձնակատար արտաքին յարաբերութիւններու մէջ: Հակառակ այս բազմադիմի գաղութներու՝ Հ. Յ. Աիգեր քին յարաբերութիւններու մէջ: Նաեւ հայազիտական ուսումնասիրութիւններու, ի Միւնխէն եւ հետամուտ եղած է նաեւ հայազիտական ուսումնասիրութիւններու, որոնց ի Բերլին պարապած է պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններու, որոնց ծաշակն արթնացած էր իր մէջ ուսուցչապետն է. Տեղա ի վիենտիկ: Հայոց հնա-գոյն եւ հին պատմութիւնը յատկապէս առարկայ եղած է իր հետազոտութիւններուն, որոնց հարեանցի ամփոփումը տուած է Բազմամիտ իր էջերուն մէջ: Գեղ. Հ. Աիգեր միջամուխ եղած է նաեւ դասական լեզուներու ուսումին. իր լատիներէնի հմտութեան զեղեցիկ գրաւականն է ժամազբի լատիներէն թարգմանութիւնը: Անոնք, որ այցելած են ի Ս. Ղազար եւ ունեցած են առիթ անձամբ ծանօթանալու Գեղ. նորընտիր Արքայօր հետ, ընդունած են անմոռաց տպաւորութիւններ իր սիրալիւր եւ բարեհամբոյր անձնատրուութենէն:

- 85. Գրիգոր Լուսաւորիչ ազգային երկուս վարժարան. Աթէնք, 1928—1929 տարեշրջան: Աթէնք, տպ. Նոր Օր, 1929, 8⁰, էջ 16:
- 86. Եղիաեան Բիւզ. Մ. եւ Mary Jeanes — Կրօնարարոյական Դասեր, կարգ, Ա. Եռամսեայ: Հալէպ, տպ. Գոլէճ, 1928, 8⁰, էջ 93:
- 87. Երեցեան, Ա. Յ. — Որդեստան մատուցում հինգ արար, մէկ պատկեր: Հալէպ, տպ. Բ. Թօփալեան, 1929, 8⁰, էջ 60: Գին՝ 10 դր.:
- 88. Եօթնամսնամեայ Յորելեան Մեծարեանի նուագարեանի գրական գործունէութեան 1859—1929: Պարիս, տպ. Ղարուհաստական, 1929, 8⁰, էջ 14:
- 89. Թուրք շրջաբերական Տեան Պետրոսի Պետրոսի Թ. Ի Թերզեան Պատրիարքական Կիլիկիոյ առթիւ Յայտարարութեան Մարտիրոսութեան Գէորգեան Տեան Տէր Կոմիտաս քահանայի: Երուս, 1929, 8⁰, էջ 15:
- 90. Ինչ է Հ. Բ. Լ. Միւլթիւնը, իր ցեղը, ներկան եւ ապագան: Պարիս, տպ. Մասիս, 1929, 8⁰, էջ 64: Հ. Բ. Լ. Միւլթիւն:
- 91. Լէվինսկի Վ. — Ընկերավարական ջազգայնականները եւ ճնշուած ժողովուրդները: Թրգմ. Կ. Սասունի: Մոսկ, տպ. de Navarre, 1929, 8⁰, էջ 153: Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Մանչըր. Դրօշակ, Թիւ 67:

«Հանդէս Ամսօրեայի» խմբագրութիւնը յայտնելով իր ի սրտէ ուրախակցութիւնը այս քարեղէպ ընտրութեան առթիւ, կը բերէ իր հիացմունքը Արժանապատիւ Ընտրելոյն եւ իր եղբայրական համակարիք սէրը Միաբանութեան բոլոր անդամներուն. կը մտադրէ բոլոր Միաբանութեան նորընտիր Արքայօր իմաստուն ղեկավարութեան տակ ամս լիութեան, յառաջադէմ զարգացման եւ քարեզարդութեան:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի:

ԵՂԻՉԷ ԱՐՔԵՊ, ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՏՐՈՒՄ ԶՍՅՈՑ ԵՐՈՒՍԱԶԷՄԻ.

ՅՈՒՐԵԱՆ

Կէս դար տարածած իւր քաղաքներն անմահ Գառին առաջ երկնաւոր Հօթ գութն ու ձիւրը հայցած է Յոբելեարը հայ ժողովուրդի համար. իբրեւ Մովսէս Սինայի վրայ, իբրեւ Ներսէս Նպատի վրայ: Յիսուն տարիներ զոհաբերած է նա հայ ժողովուրդի քազինի վրայ, անոր ցաւերուն ցաւակից եւ անոր ուրախութիւններուն ուրախակից: Այդքան ժամանակ նուիրուած է նա հայ ժողովուրդի դաստիարակութեան, հայ գրականութեան եւ հայագիտութեան քարգաւաճման:

Հայ անուան ի պատիւ, հայ մտքին ի շահ, հայ սրտին ի մխիթարութիւն վա՛ր տակեցաւ նա քանի եւ գրչով անձնուէր, անշահախնդիր, քազմարդին:

Ամէն տեղ, ուր ինկած են թորգոմայ տան սերմերը, հասած է Սրբազան Յոբելեարին խնամքը. քայց յատկապէս Կ. Պոլիս, Պարտիզակ, Արմաշ, Զմիւռնիա, Երուսաղէմ եղած են աշխատասէր Մշակին գործունէութեան դաշտերը. խոպան հողը գործունեայ, հմուտ ձեռքին տակ ծաղկալից, մրգաշատ քարգաւաճած է. առապար սրտեր անոր առատածիր խօսքերու տարափին տակ յուրթի գործուած, անմշակ մտքեր դաստիարակի կենսունակ, հայրատուր ցողով կակղացած, ամոքած ընդունած են իրենց մէջ առողջ սերմեր եւ հայ անդաստանին մէջ պտղալից գա՛ր գացած: Արդիւնքը վաստակն է քաջարի Մշակին ջերմ քրտինքներուն. տոհմական զանազան փառքի շտեմարանը պիտի կրուի շեղջ շեղջ:

Սերմանեց սէր, կը հնձէ գութ. տարածեց լոյս, կը շողայ լուսափիւռ. հայ ժողովուրդի համակրանքը միշտ վառ եղած է հանդէպ իր գործիչին. եւ այդ համակրանքի հաւաստիքն է տօնախմբութիւնս, երբ համայն հայ սիրտն է որ կը ցնձայ:

Աղբիւրը ջինջ է եւ քազմաբուրխ, ախորժեղի ամէն ծարսիներու:

«Հանդէս Ամսօրեայ» ի խմբագրութիւնը կը զգայ ինքզինքը պարտաւոր, բերելով ձօնելու Յոբելեարին ծաղկեպսակ ի կողմանէ հայ քանասիրութեան, ի նշանակ երախտեաց եւ շնորհակալու մտաց: — Laurum lauro digno!



141067-64

Բարձրապատիւ Յոբելեարը կը տօնէ նաեւ իր գրական գործունէութեան յոբելեանը. գործունէութիւն, որ նուիրուած էր համակ հայ քանասիրութեան: Ոչ միայն հետամուտ եղած է Յոբելեարը նախնեաց լեզուն սիրելի ընծայել հայ մատաղ սերունդին, հասկանալի եւ դիւրընկալ, դասաւանդութեամբ եւ դասազրբերով, անուան պատուաբեր աշխատութիւն է «Պատմութիւն հայ Մատենագրութեան» (1885), ուր հակիրճ, դիւրընկալ տողերու մէջ ամփոփած է հայ մտքի արտադրութիւններու բովանդակածը ի սկզբանէ մինչեւ մեր օրերը: Հմտութիւն, կուռ լեզու, ճշգրիտ դատաստան, պայծառ պատկեր հայ մտքի զարգացման ելելէջներու՝ զարդն է այդ աշխատութեան. եւ ցաւ է որ այն իր անդրանիկ տպագրութեան մէջ մնաց անձուկ շրջանակին միայն մատչելի:

Յոբելեարին շնորհակալութիւն նաեւ իր քազմաթիւ մեծ ու փոքր յօդուածաշարքերուն համար, նուիրուած մատենագրական, գրական եւ լեզուաքանական հարցերու: Մանրակրկիտ քննասէրը կը խօսի հոն, սուր տեսութեամբ, ուղիղ դատաստանով, զգոյշ քայլերով: Ս. Գրքի թարգմանութեան եւ նախնեաց այլ ընագիրներու մասին իւր քառաքննական-ընազարքննական դիտողութիւնները յարգեն ամէն ժամանակի համար. եւ քանասիրութիւնը պիտի գտնէ հոն շատ մը խնդիրներու լուծումը եւ լուսաւորութիւնը: Դժբախտաբար անոնք ցրուած են քազմաթիւ ամսազեր-օրագիրներու մէջ, եւ այս պատճառաւ դժուարամատչելի հայ քանասէրներու ընդարձակ շրջանակներու:

Դուրեան Սրբազանի մէջ խօսած է նաեւ Պետրոս Դուրեանի հոգին, աւելի հովուական սրինգով: Եթէ Մուսան յորդորած է զինքը երգել աստուածներու քարտու, քայց քանաստեղծը աւելի յաճախ սիրած է խօսիլ հայ սրտերու լեզուով, ժողովրդեան ընտելացնել հայ երգիչներու՝ ինչպէս Ներսէս Շնորհալիի մի ստեղծագործութիւնները՝ աշխարհաբար տաղաշափութեամբ: Նոր սրտեր հին սրտերու զօղելու փորձեր, որոնք անչափ գնահատելի են:

Արժանի է մշակն վարձու իւրոյ: Եւ Յիսնամեայ վաստակաւորին մեր հիացմունքը, գնահատութիւնը եւ համակրանքը կ'արտայայտենք երախտագիտական զգածումներով:

Կը մտադրենք Յոբելեարին, ոյժ, կարողութիւն եւ ամաց շատութիւն, պայծառանալու իւր գործունէութեան ասպարէզի վրայ աւելի շողշողուն արդեամբք, ի պարծանս Ազգին եւ տոհմային գրականութեան:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի: